

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի թիվ 1062-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010-2014թթ սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրի շարունակականությունը ապահովելու, 2011 թվականի աշնանը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մարզին հատկացված ցորենի սերմացուն բաշխելու, պայմանագրային պարտավորությունները, սերմացուի հետ վերադարձը ապահովելու համար ստեղծել մասնագիտական հանձնաժողով ըստ տարածաշրջանների հետևյալ կազմով՝

Գրիգորյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ - Վարդենիսի տարածաշրջան

Ղազարյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Գավառի տարածաշրջան

Մարգարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Սևանի տարածաշրջան

Ջրաղացպանյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ - Մարտունու տարածաշրջան

Բաղեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ - Ճամբարակի տարածաշրջան

2. Հանձնաժողովին՝

1) յուրաքանչյուր երկուշաբթի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին ներկայացնել տեղեկատվություն սերմի բաշխման, ցանքի և հետ վերադարձի վերաբերյալ:

2) տեղերում կատարել սերմերի հետ կապված փաստաթղթերի հաշվառումներն ու ձևակերպումները:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Հովհաննիսյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն.ՊՈՐՈՍՅԱՆ